ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 32

«11» 04 2018 թ. քաղ. Երևան

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 115 ՀՐԱՄԱՆԸ, 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N 20/2(3)-152-09 ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 30/8-19-15 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 35/11-14 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-Ի ԿԵՏԻ 22-ՐԴ ԵՆԹԱԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատարաններում մեղադրանքի պաշտպանության որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, այդ ոլորտում արդյունավետ վերահսկողություն ապահովելու, արդարացման դատավճիռներ կայացնելու պատճառները, այդ թվում՝ մինչդատական վարույթում թույլ տրված խախտումները վեր հանելու և բացառելու, դատարանում քրեական գործերի քննության ձգձգումներին նպաստող հանգամանքները պարզելու և վերացնելու, հանցագործությունների որակման միասնական պրակտիկա և պատժողական քաղաքականություն, ինչպես նաև դատական ակտերի բողոքարկման լիազորության նկատմամբ վերահսկողություն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Հրամայում եմ՝

1. Մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝

1) Քրեական գործով հաստատված մեղադրական եզրակացությունն ու բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու համար գործը դատարան ուղարկելու մասին որոշումը, դրանք հաստատելու մասին դատախազի որոշումների, ինչպես նաև դատի տրված

անձի (անձանց) վերաբերյալ նախաքննության ընթացքում կայացված՝ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու (նաև առաջադրված մեղադրանքի մասով քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշումների պատճենները 5-օրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ու կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություններ՝ ըստ իրավասության ոլորտի **(այսուհետ՝ համապատասխան վարչություն)**:

2) Դատի տրված մեղադրյալի կամ վերջինիս առաջադրված մեղադրանքի հետ առնչվող այլ անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական գործի մասը կարճելու կամ առաջադրված մեղադրանքի մասով քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշումները քրեական գործը դատարան ուղարկելուց հետո վերադաս դատախազի կամ դատարանների կողմից վերացվելու, ինչպես նաև դատարան ուղարկված գործով մեղադրանքի ծավալին կամ հիմնավորվածությանն առնչվող այլ որոշումները վերադաս դատախազի կամ դատարանի կողմից վերացվելու դեպքում, հաղորդում ներկայացնել համապատասխան վարչություն (Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները՝ նաև Երևան քաղաքի դատախազություն)՝ կցելով նշված որոշման պատճենը և համապատասխան վարչությունում քննարկել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կարգով փոփոխելու կամ, 309.2-րդ հոդվածով սահմանված կարգով, դատական քննության ընթացքում այլ անձի մեղադրանք առաջադրելու հարցը:

3) Ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը դատարանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կարգով լրացնելու կամ փոփոխելու, մեղադրական ճառով նրան առաջադրված մեղադրանքի վերաորակում միջնորդելու, մեղադրանքից հրաժարվելու, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.2-րդ հոդվածով սահմանված կարգով նոր քրեական գործ հարուցելու, դատական քննության ընթացքում այլ անձի մեղադրանք առաջադրելու հիմքեր հայտնաբերելու դեպքում, մինչև նշված դատավարական լիազորություններն իրականացնելը, հաղորդում ուղարկել համապատասխան վարչություն (Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները՝ նաև Երևան քաղաքի դատախազություն)՝ նշելով այդ դատավարական լիազորությունների իրականացման հիմքերը:

4) Յուրաքանչյուր շաբաթվա առաջին աշխատանքային օրը համապատասխան վարչություն ուղարկել տեղեկանք՝ նախորդ շաբաթվա ընթացքում ընդհանուր իրավասության առաջին ատյանի ու վերաքննիչ դատարաններում քննված և դատական ակտի կայացմամբ ավարտված քրեական գործերի վերաբերյալ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (կցվում են):

5) Մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը համապատասխան վարչություն ուղարկել տվյալ օրվա դրությամբ դատարաններում քննվող քրեական գործերի վերաբերյալ ամփոփ տեղեկանք՝ նշելով գործի համարը, ամբաստանյալի(ների) տվյալները, քրեական օրենսգրքի հոդվածը, մասը և կետը (ըստ դրվագների), գործը դատարան ուղարկելու ամսաթիվը, մեղադրողի տվյալները և դատական քննության փուլը:

6) Գործը դատարանի կողմից մեղադրողին վերադարձնելու, դատարանի կողմից վարույթ ընդունված քրեական գործով խափանման միջոցը փոփոխվելու, քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելու, մեղադրողին հայտնված բացարկը բավարարելու, քրեական գործի վարույթը կասեցնելու կամ վերսկսելու մասին որոշում, արդարացման դատավճիռ

կայացնելու, ինչպես նաև մեղադրական դատավճռով առաջադրված մեղադրանքը վերաորակելու դեպքում, անհապաղ այդ մասին հաղորդում ուղարկել համապատասխան վարչություն՝ կցելով կայացված որոշումների և/կամ դատավճիռների պատճենները:

2. **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ու կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունների պետերին՝**

1) Ապահովել սույն հրամանի 1-ին կետին համապատասխան ստացված տեղեկությունների ու փաստաթղթերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, յուրաքանչյուր գործով վերստուգել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 273-րդ հոդվածի պահանջների պահպանումը, իսկ խախտումներ հայտնաբերելիս միջոցներ ձեռնարկել՝ դրանք վերացնելու ուղղությամբ:

2) Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո, ինչպես նաև մեղադրանքը ցանկացած գործով դատարանում փոփոխելու հիմքեր հայտնաբերելու դեպքում, տարածքային դատախազությունների հետ քննարկել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կարգով փոփոխելու կամ, 309.2-րդ հոդվածով սահմանված կարգով, դատական քննության ընթացքում այլ անձի մեղադրանք առաջադրելու հարցը:

3) Դատարաններում քննված և ավարտված քրեական գործերի վերաբերյալ տեղեկանքների ուսումնասիրությամբ գնահատել կայացված դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անհիմն և անօրինական դատական ակտերի բողոքարկումը:

4) Դատարաններում քննվող քրեական գործերով ապահովել մեղադրանքի պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը և այդ շրջանակներում ուսումնասիրել ու պարզել ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ 4 ամսից ավելի, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ 6 ամսից ավելի ժամկետով քննվող քրեական գործերի քննության ժամկետների ձգձգման պատճառները:

5) Յուրաքանչյուր ամիս ամփոփել տվյալ ամսվա ընթացքում դատարանների կողմից լրիվ կամ մասնակի արդարացման դատավճիռներ, արարքի վերաորակմամբ կամ մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում փոփոխված մեղադրանքով մեղադրական դատավճիռներ կայացնելու, ինչպես նաև քրեական գործով վարույթը կարճելու և/կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով կարճված քրեական գործերի) դատական պրակտիկան և մինչև հաջորդ ամսվա 10-ը արդյունքները ներկայացնել ոլորտը համակարգող Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալին:

6) Սույն հրամանի պահանջները խախտելու դեպքում զեկուցագիր ներկայացնել ոլորտը համակարգող Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալին՝ պատճառները պարզելու, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու և հրամանի պահանջներն ապահովելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

3. **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և**

դատական ակտերի բողոքարկման ու կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունների աշխատանքները համակարգող տեղակալներին՝

1) Սույն հրամանի 2-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված ամփոփման արդյունքները մինչև յուրաքանչյուր ամփոփվող ժամանակահատվածին հաջորդող ամսվա 20-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

2) Սույն հրամանի 2-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված զեկուցագիր ներկայացնելու դեպքում անհապաղ միջոցներ ձեռնարկել բացթողումը վերացնելու ուղղությամբ, իսկ բացթողում թույլ տված դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության դեպքում զեկուցագիր ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

4. Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներին, բաժինների պետերին և կայազորների զինվորական դատախազներին՝

1) Քրեական գործով հաստատված մեղադրական եզրակացությունն ու բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու համար գործը դատարան ուղարկելու մասին որոշումը, դրանք հաստատելու մասին դատախազի որոշումների, ինչպես նաև դատի տրված անձի (անձանց) վերաբերյալ նախաքննության ընթացքում կայացված՝ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու (նաև առաջադրված մեղադրանքի մի մասով քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշումների պատճենները 5-օրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին:

2) Դատի տրված մեղադրյալի կամ վերջինիս առաջադրված մեղադրանքի հետ առնչվող այլ անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական գործի մասը կարճելու կամ առաջադրված մեղադրանքի մասով քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշումները քրեական գործը դատարան ուղարկելուց հետո վերադաս դատախազի կամ դատարանների կողմից վերացվելու, ինչպես նաև դատարան ուղարկված գործով մեղադրանքի ծավալին կամ հիմնավորվածությանն առնչվող այլ որոշումները վերադաս դատախազի կամ դատարանի կողմից վերացվելու դեպքում, հաղորդում ներկայացնել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին՝ կցելով նշված որոշման պատճենը և քննարկել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կարգով փոփոխելու կամ, 309.2-րդ հոդվածով սահմանված կարգով, դատական քննության ընթացքում այլ անձի մեղադրանք առաջադրելու հարցը:

3) Ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը դատարանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կարգով լրացնելու կամ փոփոխելու, մեղադրական ճառով նրան առաջադրված մեղադրանքի վերաորակում միջնորդելու, մեղադրանքից հրաժարվելու, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.2-րդ հոդվածով սահմանված կարգով նոր քրեական գործ հարուցելու, դատական քննության ընթացքում այլ անձի մեղադրանք առաջադրելու հիմքեր հայտնաբերելու դեպքում, մինչև նշված դատավարական լիազորություններն իրականացնելը, հաղորդում ուղարկել ՀՀ զինվորական դատախազին՝ նշելով այդ դատավարական լիազորությունների իրականացման հիմքերը:

4) Յուրաքանչյուր շաբաթվա առաջին աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին ուղարկել տեղեկանք՝ նախորդ շաբաթվա ընթացքում ընդհանուր իրավասության առաջին ատյանի ու վերաքննիչ դատարաններում քննված և դատական ակտի կայացմամբ ավարտված քրեական գործերի վերաբերյալ՝ համաձայն կից N 1 և N 2 հավելվածների:

5) Մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին ուղարկել տվյալ օրվա դրությամբ դատարաններում քննվող քրեական գործերի վերաբերյալ ամփոփ տեղեկանք՝ նշելով գործի համարը, ամբաստանյալի(ների) տվյալները, քրեական օրենսգրքի հոդվածը, մասը և կետը (ըստ դրվագների), գործը դատարան ուղարկելու ամսաթիվը, մեղադրողի տվյալները և դատական քննության փուլը:

6) Գործը դատարանի կողմից մեղադրողին վերադարձնելու, դատարանի կողմից վարույթ ընդունված քննվող քրեական գործով խափանման միջոցը փոփոխվելու, քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելու, մեղադրողին հայտնված բացարկը բավարարելու, քրեական գործի վարույթը կասեցնելու կամ վերսկսելու մասին որոշում, արդարացման դատավճիռ կայացնելու, ինչպես նաև մեղադրական դատավճռով առաջադրված մեղադրանքը վերաորակելու դեպքում, անհապաղ այդ մասին հաղորդում ուղարկել ՀՀ զինվորական դատախազին՝ կցելով կայացված որոշումների և/կամ դատավճիռների պատճենները:

5. **Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին՝**

1) Ապահովել սույն հրամանի 4-րդ կետին համապատասխան ստացված տեղեկությունների ու փաստաթղթերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, յուրաքանչյուր գործով վերստուգել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 273-րդ հոդվածի պահանջների պահպանումը, իսկ խախտումներ հայտնաբերելիս միջոցներ ձեռնարկել՝ դրանք վերացնելու ուղղությամբ:

2) Սույն հրամանի 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո, ինչպես նաև մեղադրանքը ցանկացած գործով դատարանում փոփոխելու հիմքեր հայտնաբերելու դեպքում, կայազորի դատախազության հետ քննարկել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կարգով փոփոխելու կամ, 309.2-րդ հոդվածով սահմանված կարգով, դատական քննության ընթացքում այլ անձի մեղադրանք առաջադրելու հարցը:

3) Դատարաններում քննված և ավարտված քրեական գործերի վերաբերյալ տեղեկանքների ուսումնասիրությամբ գնահատել կայացված դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անհիմն և անօրինական դատական ակտերի բողոքարկումը:

4) Դատարաններում քննվող քրեական գործերով ապահովել մեղադրանքի պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը և այդ շրջանակներում ուսումնասիրել ու պարզել ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ 4 ամսից ավելի, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ 6 ամսից ավելի ժամկետով քննվող քրեական գործերի քննության ժամկետների ձգձգման, ինչպես նաև արագացված դատաքննության կարգի կիրառման պայմաններում 3 և ավելի նիստ նշանակված լինելու պատճառները:

5) Յուրաքանչյուր ամիս ամփոփել տվյալ ամսվա ընթացքում դատարանների կողմից լրիվ կամ մասնակի արդարացման դատավճիռներ կամ արարքի վերաորակմամբ

մեղադրական դատավճիռներ կայացնելու, կամ մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում փոփոխված մեղադրանքով կամ քրեական գործով վարույթը կարճելու և/կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով կարճված քրեական գործերի) դատական պրակտիկան և մինչև յուրաքանչյուր ամփոփվող ժամանակահատվածին հաջորդող ամսվա 20-ը արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

6) Սույն հրամանի պահանջները խախտելու դեպքում անհապաղ միջոցներ ձեռնարկել բացթողումը վերացնելու ուղղությամբ, իսկ բացթողում թույլ տված դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության դեպքում զեկուցագիր ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

6. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2009 թվականի հունիսի 3-ի՝ «Մեղադրանքի պաշտպանության արդյունավետության բարձրացման և այդ բնագավառում միասնական քաղաքականության սահմանման մասին» N 20/2(3)-152-09 հանձնարարականը,

2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի դեկտեմբերի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատարաններում 4 ամսից ավել քննվող կամ քննված քրեական գործերով տեղեկություն ներկայացնելու մասին» N 115 հրամանը,

3) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի մայիսի 27-ի՝ «Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ իրականացվող հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի 2015 թվականի մայիսի 18-ի N 15/2(3)-15 հանձնարարականն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 30/8-19-15 հանձնարարականը,

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի 2014 թվականի փետրվարի 19-ի N 35/11-14 հանձնարարականը,

5) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի մարտի 21-ի N 27 հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 03.03.2017թ. նիստի արձանագրության (Արձանագրություն N 1) որոշման 1-ին կետի 22-րդ ենթակետը:

7. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

8. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018թ. ապրիլի 11-ի

N 32 հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ

_____

մարզի, վարչական շրջանի(ների) կամ կայազորի անվանումը և ներկայացվող տեղեկության ժամանակահատվածը

Հ/Հ	1.Քրեական գործի համարը (նաև դատական). 2.Դատարանի անվանումը. 3.Գործը դատարան ուղարկելու ամսաթիվը	Ամբաստանյալի(ների) տվյալները	1.Առաջադրված մեղադրանքը (ՀՀ քր. օր.-ի հոդվածը, մասը, կետը՝ ըստ դրվագների). 2. Ընտրված խափանման միջոցը	1. Մեղադրողի տվյալները, 2. Մեղադրողի միջնորդությունը՝ համառոտ նշելով հիմքերը	1. Դատական ակտի կայացման օրը. 2. Եզրափակիչ մասի տվյալները	Դատական ակտը բողոքարկելու մասին դիրքորոշումը (նշել հիմքը)	Այլ տեղեկություններ (հանցագործությամբ պատճառված վնասի չափի, հատուցման, դատական ծախսերի բաշխման մասին և այլն)
1	2	3	4	5	6	7	8
1							
2							
3							
4							
5							

Տեղեկանքը կազմեց՝ _____

ստորագրություն, անուն, ազգանուն

Մարզի, վարչական շրջանի(ների) կամ կայազորի զինվորական դատախազ՝ _____

ստորագրություն, անուն, ազգանուն

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018թ. ապրիլի 11-ի

N 32 հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում քննվող բողոքների վերաբերյալ

_____

մարզի, վարչական շրջանի(ների) կամ կայազորի անվանումը և ներկայացվող տեղեկության ժամանակահատվածը

Հ/Հ	Ամբաստանյալի(ների) տվյալները	Առաջին ատյանի դատարանի դատական ակտի եզրափակիչ մասի բովանդակությունը	Ում կողմից է բերվել վերաքննիչ բողոք և ինչ հիմքով	1.Վերաքննիչ դատարանի որոշման կայացման օրը. 2. Բողոքի վերաբերյալ ընդունված որոշումը	Դիրքորոշումը՝ վճռաբեկ բողոք բերելու վերաբերյալ
1	2	3	4	5	6
1					
2					
3					
4					
5					

Տեղեկանքը կազմեց՝ _____

ստորագրություն, անուն, ազգանուն

Մարզի, վարչական շրջանի(ների) կամ կայազորի զինվորական դատախազ՝ _____

ստորագրություն, անուն, ազգանուն